

Հ Ա Ն Գ Ի Ս Ց
ՀԱՅՐ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՈՏՈՒՐՅԱՆԻ
(1881—1959)

Դեկտեմբերի 8-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 7-ին, Մայր Աթոռում ի Տեր հանգչավ Վենետիկի Մխիթարյան ուխտի միաբան, բազմավաստակ զրականագետ և բանասեր Հ. Մկրտիչ վարդապետ Պոտուրյանը:

Առանձնապես վերջին տարիներին քայքայվել էր Հ. Մկրտիչ Պոտուրյանի առողջությունը: Նրա թևերի տակ, ավելի քան 12 տարիներ, բույն էր դրել անբուժելի հիվանդությունը: Վեհափառ Հայրապետի ցանկությանը և հոգածությանը, այնուամենայնիվ, ձեռք առնվեցին բժշկական բոլոր խնամքները՝ նրան բուժելու կամ գեթ երկարացնելու համար նրա կյանքի օրերը գոնե 1—2 տարով, որպեսզի հայրենասեր Մխիթարյանը, «Հայրենի հողին վրա, Ս. էջմիածնի Տաճարի հովանիին ներքև, Արարատի շուքին տակ և Երասխի ջուրին մոտիկ», վայելի Հայրենի հողի քաղցրությունը և իր «նպաստի լուսան» բերի «հայրենի մտավորական գանձարանին»:

Խորհուրդ մարդկան, կամքն Աստուծո:

Հայր Պոտուրյանը, շրջապատված Մայր Աթոռի միաբանության սիրով և զուրգուրանքով, նրանց աղոթքների տակ, հոգին ավանդեց խաղաղությանը, իր իսկ ցանկությունները ստանալուց հետո վերջին Ս. Հաղորդությունը:

Դեկտեմբերի 10-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, Ս. Գայանեի վանքում պաշտվեց հոգեհանգստյան սուրբ պատարագ՝ ի հանգիստ Հ. Մկրտիչ Պոտուրյանի հոգու:

Հանգուցյալի վերջին օծումը կատարեց Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը:

Հոգևոր ծննդարանի վերատեսուչ Գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը իր շատ գեղեցիկ ու բովանդակալից դամբանականի



Հ. ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐՅԱՆԸ ՄԱՏՆԱԳԱՐԱՆՈՒՄ

մեջ ծանրացավ Հ. Մկրտիչ Պոտուրյանի զրական, բանասիրական, հրապարակագրական վաստակի վրա, ընդգծելով միաժամանակ հավատավոր և հայրենասեր Մխիթարյան վարդապետի կյանքի ուսանելի գծերը:

Սուրբ պատարագին և վերջին օծման ներկա էին նաև Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի ամբողջ եպիսկոպոսական դասը, միաբանության անդամները, Հոգևոր ծննդարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը, հանգուցյալի հարազատ բույրը, աղբականներ, բարեկամներ և ծանոթներ:

Հավարտ սուրբ պատարագի դազալը ուսումբարձ դուրս են բերում Հոգևոր ծննդարանի ուսանողները, հոգեհանգստյան շարականների և աղոթքների թախժոտ հնչյունների տակ: Հուղարկավորների թափորը Ս. Գայանեի տաճարի շուրջը դառնալով կանգ է առնում տաճարի հյուսիսային կողմը, նորափոր գերեզմանի առաջ, կատարվում է թաղման կարգը՝ նախագահությամբ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի: Հրաժեշտի վերջին րոպեներն են: Քիչ հետո Հայրենի հողի ծոցում, իր երազած, պաշտած և տեսած Հայրենի հողում կթաղվի հայրենասեր Մխիթարյանը: Հ. Մկրտիչ Պոտուրյանի գե-

րեզմանի առաջ և դագաղի վերև, հրաժեշտի շատ հուզիչ դամբանական է խոսում «էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Լատիտյանը և ապա դագաղը հուշիկ իջեցվում է գերեզման, Մայր Աթոռի և հայ մշակույթի շատ երախտավորների շարքի մեջ:

Ժամը 3-ին վանական սեղանատանը տրվում է հոգեճաշ, որին ներկա են լինում, բացի միաբանությունից և ուսանողությունից, նաև Հ. Մկրտիչ վաղդապետ Պոտուրյանի հարազատները և այլ բարեկամներ:

Հոգեճաշի սեղանը օրհնում է գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը: Հանգուցյալ Հ. Մկրտիչ Պոտուրյանի հիշատակը ոգեկոչելով, ուսանողության թելադրություններ է անում հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մա-

տենջյանը՝ շարունակելու Հ. Պոտուրյանի մատենագրական գործը և սրտագին բաղձանք է հայտնում մի հատորում հավաքված և հրատարակված տեսնելու Հ. Պոտուրյանի մատենագրական-բանասիրական վաստակի կարևոր մասը:

Հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության, Ալսարանի ուսանող Հակոբ Գյուկչյանը խոստանում է հետևել Հ. Պոտուրյանի օրինակին և վառ պահել նրա հիշատակը:

Հոգեճաշի սեղանը վերջանում է գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանի հորդորով և խմբովին երգված տերունական աղոթքով:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

